«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

‘ ’ ---------- 2022 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 1091-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի «Սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման կամ բնակելի տան կառուցման նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 1091-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին հավելվածի՝

ա. 3-րդ կետում «զինծառայող» բառից հետո լրացնել «, իսկ 2022 թվականին ծրագրի շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման 2-րդ հավելվածի 5-րդ կետում նշված ժամկետում դիմում-հայտ ներկայացրած և ծրագրի մասնակիցների ռեեստրում գրանցված բոլոր զինծառայողները» բառերով,

բ. 7-րդ կետի 5-րդ ենթակետում «վճարների» բառը փոխարինել «վճարի, որի չափը չի կարող կարող գերազանցել վարկի մայր գումարի 0,02 տոկոսը» բառերը.

2) որոշման 2-րդ հավելվածի՝

ա. 8-րդ կետի երրորդ նախադասությունում «զինծառայողները,» բառից հետո լրացնել «ինչպես նաև ռազմաուսումնական հաստատություն ավարտելուց հետո 5 տարվա ընթացքում դիմում-հայտ ներկայացրած սպայական կազմի զինծառայողները,» բառերը, իսկ «այդ զինծառայողների տվյալները ծրագրի

մասնակիցների ռեեստրում գրանցվում են ըստ նրանց՝ բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառման վերցնելու օրվա, ամսվա և տարվա հերթականության» բառերը փոխարինել «վիճակահանությունը կազմակերպվում է միայն ծրագրում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք ունեցող զինծառայողների միջև» բառերով,
բ. 10-րդ կետի երկրորդ նախադասությունում «սուբսիդավորման» բառից հետո լրացնել «, լրացուցիչ երաշխիքների շրջանակներում հիպոթեքային վարկի մայր գումարի մարման» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան

2022 թ.
Երեւան